**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

**ք.Երևան** «04» 02 2025 թ N 518-Ա

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 358-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի ա. պարբերությամբ.

**հ ր ա մ ա յ ու մ  ե մ.**

1. Հաստատել «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության՝

1) հաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) 2025 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ընկերության աշխատակիցների խրախուսումն իրականացնել կանխատեսվող եկամուտների ապահովման դեպքում և այն համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ:

3. Որակի ենթակառուցվածքի զարգացման վարչությանը և Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանն՝ ապահովել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի ա. պարբերությամբ սահմանված պահանջների կատարումը սույն հրամանի հաստատումից հետո 10 օրյա ժամկետում:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 26-ի ««Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի փետրվարի 7-ի N 340-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 358-Ա հրամանը:

5. Սույն հրամանը տարածվում է 2025 թվականի հունվարի 3-ից ծագած հարաբերությունների վրա:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ

ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

« --------» «---------» 2025 թ.

N ------- հրամանի

**«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ**

**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2025թ.**

| **Պաշտոնի անվանումը** | **Հաստիքային միավորի քանակը** | **Ամսական աշխատավարձի դրույքաչափ (հազար դրամ)** | **Ամսական աշխատավարձի ֆոնդ (հազար դրամ)** |
|---|---|---|---|
| **ՎԱՐՉԱԿԱՆ** | | | |
| Տնօրեն | 1 | 950.0 | 950.0 |
| Տնօրենի տեղակալ | 1 | 680.0 | 680.0 |
| Կառավարման համակարգի մենեջեր | 1 | 570.0 | 570.0 |
| **ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ** | | | |
| Հաշվապահ | 1 | 450.0 | 450.0 |
| Իրավաբան | 1 | 450.0 | 450.0 |
| Մարդկային ռեսուրսների մասնագետ | 1 | 450.0 | 450.0 |
| Գործավար | 1 | 380.0 | 380.0 |
| **ՌԵԵՍՏՐՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ** | | | |
| Բաժնի պետ | 1 | 470.0 | 470.0 |
| Առաջին կարգի մասնագետ | 1 | 420.0 | 420.0 |
| **ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ** | | | |
| Բաժնի պետ | 1 | 500.0 | 500.0 |
| Առաջատար մասնագետ | 5 | 450.0 | 2250.0 |
| Առաջին կարգի մասնագետ | 2 | 420.0 | 840.0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | 17 | | 8410.0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ** | | | 100920.0 |

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
« --------» «---------» 2025 թ.
N  -------  հրամանի

## «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-Ի (ԱՐՄՆԱԲ-ի) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| N | Աշխատանքի, ծառայության անվանումը | 2025 թ. |
|---|---|---|
| 1 | Դրամաշնորհ | 114000.0 |
| 2 | Հավատարմագրման գործընթացի ապահովումից ստացվող եկամուտ | 19000.0 |
| 3 | Գնահատումից ստացվող եկամուտ | 14650.0 |
| 4 | Տարեկան վճարներից ստացվող եկամուտ | 73675.0 |
| 5 | Բլանկների վաճառքից ստացված եկամուտներ | 8000.0 |
| 6 | Դասընթացների կազմակերպումից ստացված եկամուտներ | 1080.0 |
| 7 | Տարեսկզբյան ազատ դրամական մնացորդ | 56348.8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 286753.8 |

## «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-Ի (ԱՐՄՆԱԲ-ի) ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| N | Ծախսերի տեսակը | 2025 թ. |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, այդ թվում՝ | 137136.0 |
| 1.1 | Աշխատավարձ | 104496.0 |
| 1.2 | Խրախուսման ֆոնդ | 32640.0 |
| 2 | Արտասահմանյան գործուղման ծախսեր՝ | 16754.2 |
| 2.1 | ԵԱՏՄ հավատարմագրման ազգային մարմինների փոխադարձ գնահատման նպատակով ԱՐՄՆԱԲ-ի փորձագետի գործուղում ԵԱՏՄ անդամ - պետություններ | |
| 2.2 | Հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) անդամակցության շրջանակներում մասնակցություն գագաթնաժողովին, կոմիտեների աշխատանքներին | |
| 2.3 | ԵԱՏՄ և ՄՏԽ պայմանագրերի պարտավորությունների շրջանակներում մասնակցություն հավատարմագրման ազգային մարմինների ղեկավարների խորհրդի նիստին և աշխատաժողովներին | |
| 2.4 | Հավատարմագրման ազգային մարմնի անձնակազմի ուսուցում միջազգային չափանիշներին համապատասխան, ուսուցողական այցեր | |

| | | |
|---|---|---|
| 3 | Ներքին գործուղման ծախսեր | 300.0 |
| 4 | Հավատարմագրման Եվրոպական համագործակցության (EA) հետ բազմակողմ ճանաչմանն ուղղված միջոցառումներ. | 6500.0 |
| 4.1 | EA-ի գնահատման խմբի կողմից ԱՐՄՆԱԲ-ի նախագնահատում (ծախսը ներառում է 5 անդամի ինքնաթիռի տոմսերը, հյուրանոցը, ճաշը, տեղափոխումը և այլն ) | 3500.0 |
| 4.2 | EA-ի գնահատման խմբի կողմից իրականացվող գնահատումների ժամանակ թարգմանություն (4 թարգմանիչ - 1 անձ x 1 օր x 180 000 դրամ, 4 օր՝ 720000 դրամ x 4 հոգի) | 3000.0 |
| 5 | Կապի ծախսեր | 1800.0 |
| 6 | Ռեզերվային ֆոնդ հավատարմագրման գործունեությունից ծագող վնասները փոխհատուցելու համար - ապահովագրություն | 1400.0 |
| 7 | Տրանսպորտային ծառայություններ | 600.0 |
| 8 | Համակարգչային ծառայություններ (ՀԱՄ-ի պաշտոնական կայքէջի սպասարկում և արդիականացում, ռեեստրների սպասարկում) | 1780.0 |
| 9 | Էլեկտրոնային հավատարմագրման ծրագրի տեխնիկական սպասարկում | 36000.0 |
| 10 | Աշխատակազմի մասնագիտական զարգացում | 2000.0 |
| 11 | Ներկայացուցչական ծախսեր | 2000.0 |
| 12 | Ընդհանուր բնույթի այլ ծախսեր | 300.0 |
| 13 | Տարածքի մաքրության ծառայություններ | 840.0 |
| 14 | Գնումների համակարգողի ծառայություններ | 600.0 |
| 15 | Գնահատողների և տեխնիկական փորձագետների վարձատրության ծախսեր | 14000.0 |
| 16 | Փաստաթղթերի թարգմանության ծախսեր | 900.0 |
| 17 | Դասընթացավարի վարձատրության ծախսեր | 500.0 |
| 18 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր (քարթրիջի լիցք., փոխարինում) | 400.0 |
| 19 | Գրասենյակային պիտույքների ձեռքբերում | 800.0 |
| 20 | Տնտեսական ծախսեր | 250.0 |
| 21 | Ծախսեր հարկերի գծով (ԱԱՀ) | 28000.0 |
| 22 | Ծախսեր հարկերի գծով (գույքահարկ) | 20.0 |
| 23 | Դրամաշնորհի ԱԱՀ | 19000.0 |
| 24 | Համապատասխանության գնահատման մարմինների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացող դատական գործընթացների համար պետական տուրքեր և այլ պետական տուրքեր | 200.0 |
| 25 | Վարչական սարքավորումների ձեռքբերում | 900.0 |
| 26 | Համակարգչային ծրագրերի ձեռքբերում և սպասարկում | 300.0 |
| 27 | Բլանկների ձեռքբերում | 3424.0 |
| 28 | Տարեսկզբյան ազատ դրամական մնացորդի չօգտագործված մաս | 10049.6 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 286753.8 |

0.0